9284
L. IV. 5

# Բարեգործական

## ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ՀԱԽԱՔԱԾՈՅ

ԲԱՐՈՑԱԿԱՆ, ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ,

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ, ԵՒԱՅԼ ՊԻՏԱՆԻ ԳԻՏԵԼԵԱՑ

**ՄԱՆԿԱԿԱՆ ՎԷՊԵՐ, ՄԱՆՐԱՎԷՊԵՐ, ԶՈՒԱՐՃԱԼԻ ԽԱՂԵՐ**

**Բ. ՀԱՏՈՐ - ՏԵՏՐ 1-24**

**1883**

معارف نظارت جلیله‌سنك نومرو ۱۶۹ سنه ۹۹ صفر ۱۲ رخصت نامه‌سیله طبع اولنمشدر

ՀՐԱՏԱՐԱԿԻԶ Ք

Ն. Կ. ՊԼՊՊԼՐԵԱՆ ՆԻ Ս ՏԷՕՎԼԷԹԵԱՆ

1883

# Հայրապատում Ազգաց

Ո՛ Հայկազնեան Տանմեղ Յմանկունք՝,
կենաց դրան սեմին վրայ
Զ'որ շուրջ պատեն գողտրիկ ծաղկունք,
եւ ուր գեփիւռ կը գուրգուրայ՝
Ց'այս Բուրաստան
Ուր խինդք խայտան,
Իբրեւ հրեշտակք աւետաբեր
Անոնք մի կոյս գեղածիծաղ
Ողջունելով Յծաղկանց բիւեր
Ձեզ աւետ սիրակենցաղ
Նոր եւ արի
Բարի Տարի։

Ձեզ ի՞նչ փոյթ թէ կորաքամակ
Դողդոջաթաթայ մի ծերունի՝
ԶԴեռն, արդեն կուգայ, ճերմակ
եւ ցրտաբոյր մի սառանի
Ներքեւ խոնարհ
Պահել զ'աշխարհ,
Ձեզ ի՞նչ փոյթ ձիւն, սառնամանիք
Մրիւն ամպեր, եւ փոթորիկ,
Մինչ ցանկալի կաղանդ մ'ունիք
Որ աւետ ձեզ աղաւորիկ
Նոր եւ աթի
Բարի Տարի։

Օ՜ն, կայտառեցէք ժպտուն գոյարք,
Տանց յոյսաճեղ ոգիքն էք դուք։
Սեղանն է ճոխ եւ յոյսազարդ
Դաղրիւն տրտունջք եւ արտասուք,
Եւ սիրաբոյր
Տալով համբոյր
Ձեր ծընողք ոյց ճոգիւն ցնծայ
Ձեզ նուիրեն եռանդագին
Ոսկեզօծ գիրք մ'իբրեւ ընծայ
Մաղթելով որ շնորհն ելլիւն
Նոր եւ արի
Բարի Տարի։
Ձեր նորածիլ սրտերուն մէջ,
Թող արեւուս յոյսոյն նման
Երկիւնք այսօր վառեն անշէջ
Սէրն Հայութեան եւ սէրն ոսկման
Սէրն ընկերին
Եւ տրկարին
Որ օր մ'իբրեւ պտղաբեր ծառ
Մշակին գանձն ըլլար անգին . . .
Եւ ձեր բրթուն, ջինջ ու պայծառ
Ձայնն աւետ Հայոց ազգին
Նոր եւ արի
Բարի Տարի։

ԱԴԵՓ. Գ. ՓԱՆՈՍԵԱՆ

## ՈՍԿԵԶՕԾ ԸՆԿՈՅԶՆԵՐՆ

Ծննդի Խթման, չատ մը տղայք հիացմամբ կը դիտէին այն պարգեւներու ծառն, զոր զերմանացի ընտանիքներն սովոր են պատրաստել տանը մեծ սրահին մէջ, ի յիշատակ Մանուկ Յիսուսի ծնընդեան։ Գեղեցիկ կանաչ նոճի մ'էր. իւրաքանչիւր ճիւղին, որք վառ մոմերով լի էին, խաղալիքներ և չաքարեղէններ կային կախուած։ Ասոնցմէ զատ չատ մ'ալ ոսկեզօծ ընկոյզներ կային։ Փոքրիկն Բիէռ, որու աչքը այդ ընկոյզներուն մը նացեր էր, կը բաւական որ անոնք իրեն բաժին իյնան։

« Այս ընկոյզներն ծառին զարդն են, պէտք է պահենք իրենց տեղը թողուլ. եթէ կը փափաքիս ընկոյզ ուտել, ահա քեզի ընկոյզ։ »

Բայց Բիէռ լալով պատասխանեց.

« Ո՛չ, ո՛չ, սեւ ընկոյզ չեմ ուզեր. այս ոսկեզօծ ընկոյզներն կ'ուզեմ, որոնք խիստ համով ըլլալու են։ »

Եւ տղաքը պատժելու լաւագոյն միջոցը երբեմն անոնց մտահաճութեանցը տեղի տալ է։ Ուստի մայրը ոսկեզօծ ընկոյզներն Բիէռին տուաւ, ու վերջէն միւս ընկոյզներն բաժնեց միւս տղոց։

Բիէռ ուրախութենէն ինքնիրմէն ելաւ և փութաց դեղեցիկ ընկոյզներն կոտրել. բայց ինչ եղաւ զարմանքը երբ տեսաւ որ պարապ են և եղբայրներն ու քոյրերը վրան կը խնդան։

Այնատեն հայրն ըսաւ.

« Այս ընկոյզներն ուտելու համար չէ՛ին, այլ պարզապէս Ննդեան ծառը զեղեցկացնելու համար։ Ուստի պարապ կեղեւներն իրար փակուցի և քիչ մը կեղծ ոսկեւով պատեցի։ Ասոր պէս, տղաքս, աչխարհի մէջ չատ բաներ այս ընկոյզներուն կը նմանին. դրսէն փայլուն են, բայց ներսէն պարապ։ »

## ԲԱՐԵՊԱՇՏ ՔՈՅՐՔ

Օր մը փոքրիկն Յովհաննէս և փոքրիկն Զաքէ տունը առանձին էին։ Յովհաննէս քրոջն ըսաւ.

« Եկո՛ւր, տանը մէջ ուտելու բան մը գտնենք և ուտենք։ »

Զաքէ պատասխանեց.

« Եթէ կրնաս դիս անանկ տեղ մը տանիլ որ մէկը մեզ չի տեսնէ՝ կուգամ։

— Լա՛ւ, յարեց Յովհաննէս, կաթնարանը կ'երթանք և հոն մածուն կ'ուտենք։

— Ո՛չ, չ'է, ըսաւ քոյրը, դրացին փողոցը փայտ կը կոտրէ և կ'ելլէ կը տեսնէ մեզ։

—Իրաւունք ունիս, պատասխանեց Յովհաննէս. եկո՛ւր խոհանոց երթանք։ Դարանին մէջ տախոր մը լեցուն մեղր կայ։ Հայ կը թաթխենք և կ'ուտենք։

— Դրացուհին պատուհանը նստեր բուրդ կը մանէ, հոն ալ չ'ըլլար։

— Իրաւ է, ըսաւ փոքրիկ տղեկը. ուրեմն մառանն երթանք, ուր աղուոր խնձորներ կան և անանկ ալ մութ է որ մէկը մեզ չի կրնար տեսնել։ »

Այն ատեն Զաքէ ըսաւ.

« Ո՛վ սիրելի եղբայրս, իրաւցընջ կը կարծես որ մառանին մէջ մեզ մէկը չի կրնար տեսնել։ Չե՞ս դիտեր որ երկինքն աչք մը կայ որ պատերէն անդին և մեներախորին մթութեան մէջ իսկ կը տեսնէ։

Այս լսելով՝ Յովհաննես ահաբեկ եղաւ և դոչեց.

«Ա՛, իրաւունք ունիս, սիրելիս Զաքէ։ Աստուծոյ աչքը կը տեսնէ մեզ նոյն իսկ անանկ տեղուանք, ուր մարդոց նայուածքներէն ազատ ենք։ Ուստի զգուշանանք չարիք ընելէ՝ ուր որ ալ ըլլայ։»

Զաքէ խիստ ուրախացաւ տեսնելով որ Յովհաննէս առանց վարանելու կը համոզուէր լսածին, աղօթագրքին մէջէն գե-

*ղեցիկ պատկեր մը տուաւ անոր. այս պատկերին վրայ Աստուածոյ աչքը չինուած էր՝ ճառագայթներով չրջապատեալ, եւ տակը սա խօսքերը գրուած կին.*

« Գիշեր եւ ցերեկ, ուր որ գնամ, Աստուածոյ յաւիտենական աչքը կը կը դիտէ զիս: »

—❖—

## Ի ԾՆՈՒՆԴ ՅԻՍՈՒՍԻ

*Ծընաւ մեզ տէր, տէր Յիսուս,*
*Ծընաւ Աստուածն յաւիտեանց.*
*Զօն բերցուք սիրտս մաքուրս,*
*Խոնարհ հոգիս հեզ անձանց:*

*Ընդ հրեշտակաց երգեցուք՝*
*Ըզհաշտութիւնն աւետիս,*
*Եւ ըզՅիսուս օրհնեցուք*
*Զեկեալ փրկողն աշխարհիս:*

*Օրհնեալ եկեալ Մեսիա*
*Որ ի կուսէ ծնաւ աստ,*
*Երաց որդւոցս Ադամայ*
*Զեղեմականն առագաստ:*

*Մանուկ ծընաւ մեզ Աստուած,*
*Երկի՛նք՝ ըզնա օրհնեցէք,*
*Որպի տուաւ մեզ Աստուած,*
*Աշխարհք՝ ըզնա օրհնեցէք:*

*Օրհնեալ եկեալ Մեսիա*
*Որ ի կուսէն ծընար աստ*
*Խաչեր որդւոցս Ադամայ*
*Զեղեմականն առագաստ:*

Հ. ՂԵՒՈՆԴ Մ. ԱԼԻՇԱՆ

—❖—

## ՏՈՒՆ ՄԸ

*Երբ մէկը տուն մը չինել ուզէ, ճարտարապետ մը կը կանչէ. իւր դիտաւորութիւնը, ծախսելիք գումարն կը յայտնէ անոր և ապագայ չինուելեան համար յատակագիծ մը կ'ուզէ անկէ: Ճարտարապետութիւնն չէնքերու դիտութիւնն ըլլալով, այս դիտութիւնն ուսող և ի գործ դնողներն ճարտարապետ կը կոչուին:*

*Յատակագիծը դծագրութեան մէկ հանճարեղ տեսակն է, որ դաշտի մը, տան մը չրջագծերն, տարածութիւնները կը ցուցնէ:*

*Օրինակի համար՝ սենեկի մը յատակագիծն չինելու համար, թղթի մը վրայ դծեր կը դծեն, որք աւելի կամ նուազ կանոնաւոր քառակուսի մը կը ձեւացնեն: Հոն ուր դուռ մը պիտի գտնուի, ճերմակ միջոց մը կը թողուն պատը ներկայացնող դծին մէջ: Պատուհան մը ցուցնելու համար՝ պատին դծին վրայ իրարմէ քիչ մը հեռու երկու փոքր դծեր կը դծեն: Որպէս զի յատակագիծ մը ճիշդ ըլլայ, ահա ինչպէս կ'ընեն: ԵնթադրենՔ թէ 4 մեթր երկայնութիւն ունեցող պատի մը մեկ տասներորդն պէտք է ներկայացնել. թղթի մը վրայ 40 հարիւրորդամեթր երկայնութիւն մը կ'առնեն: Այս պատին հետ ուղիղ անկիւն մը ձեւացնող պատը 6 մեթր երկայնութիւն ունի. առաջին դծին քով 60 հարիւրորդամեթր երկայնութեամբ ուրիշ դիծ մը կը դծեն՝ միւսին ուղղահայեաց, և այսպէս կը շարունակեն. տասնկով չէ թէ միայն ձեւն, այլ և տարածութիւնն ալ ճիշդ կ'ըլլայ: Ցայտնի է որ երբ պարզ խրթին մ'ըլլայ, այսքան ծախք չ'են ըներ: Որմնաշէն մը բաւ է. նա իր վարժութեանն համեմատ՝ հաստատուն պատերով լաւ պատսպարան մը չինելով*

Ծնունդ Յիսուսի Քրիստոսի

կը բաւականանայ և վրան խոզանով կը ծածկէ : Այս ամենախոնարհ խրճիթներն շատ վայելուչ բնակարաններ են՝ մարդուս առաջին բնակութեանցը բաղդատմամբ • վասն զի ատենով անձաւներու , քարայրներու մէջ կը բնակէին , յորս այսօր կը գտնուին առաջին բնակչաց հետքերն :

Երբ տանը յատակադիծը լմննայ , դռծաւորներ կը վարձեն : Առաջին աշխատութիւնն հիմերը դնելն է : Ասոր համար պատերուն չինուելիք տեղը բաւական կը փորեն՝ կակուղ հողը վերցնելու և հաստատուն , դիմացկուն հող գտնելու համար : Եթէ այս զգուշութիւնը չ'ընեն , տանը ծանրութիւնն հողը կը ճնշէ և ուշ կամ կանուխ՝ կը կործանի :

Այդ փոսերուն տակ խոշոր հաստ քարեր կը դնեն , որք պատերուն խարիսխն են : Այդ պատերն երկանաքարէ , որ ճաքարէ , որմնաքարէ , և , կը շինուին : Որմնաքարն ալ տեսակ մը որճաքար է՝ փորք մեծութեամբ , անկանոն դործուածք և շատ հեղ ստորին տեսակէ : Ուր որ քարերն հաղուադիւտ են , անոնց տեղ աղիւս կը դործածեն :

Երբեմն ալ ատաղձէ պատեր կը շինեն : Նախ քարէ հիմերուն վրայ մոխիրէ կը դնեն , որք չեղակի մոխիրով իրարու կցուած են , և այս ատաղձներուն մէջ տեղ մնացած պարապը չաղախով կը լեցնեն : Վերջապէս պատին տեսնուած կողմը , այսինքն երեսը ամբողջացնելու համար , բարակ չաղախով կամ լաւ եւս կրագաճով (չիմէնթօ) կը ծեփեն :

Զորս հաստ պատեր տունն մը կը ձեւացնեն • բայց եթէ այսպէս չորս կողմէն միայն դոցուի , իւրաքանչիւր յարկի վրայ մէկ մեծ սրահ միայն կ'ունենայ : Զայն սենեակներու բաժնելու համար , ներսէն բարակ պատեր կը բարձրացնեն , որք միջնորմ կը կոչուին : Երբ տախտակամածներն լմննան , ուրիշ թեթեւ բաժանումներ ալ կը դնեն՝ որք անջրպետ կը կոչուին :

Տախտակամած կը կոչուին յարկերու բաժանումներն : Ասոնք չինելու համար՝ պատերուն մէջ գերաններ կը դնեն , որոց վրայ տախտակներ կը դամեն : Գերաններուն տակ նեղ ու բարակ տախտակներ կը դամեն՝ և չաղախով դոցելով՝ առաստաղը կը ձեւացնեն :

Մէկ յարկէն միւս յարկը հաղորդակցելու համար սանդուղներ կը չինեն , որոց եզերքն խաշխամներ կան վրան կռթնելու և անկումներն արդիլելու համար : Ընդհանրապէս սանդուղներու մէջտեղն փորք տախտակամածներ կան , որք սանդղագլուխ կը կոչուին :

Երբ ատոնք աւարտին , տունը կը դոցեն և տանիքն ու անոր նեցուկներն կը չինեն : Եթէ տանիքն շատ հակած չ'ըլլալով՝ կարելի է վրան քալել , պատղամք կը կոչուի : Մեր երկրին մէջ տանիքներն ընդհանրապէս երկու հակեալ մակերեւոյթներ են , որոց միացած տեղն տանը գագաթը կը ձեւացնէ : Եթէ տանիքն երկու կողմ , երկու մակերեւոյթ միայն ունենայ , կողմնակի պատերուն վերի մասը քիւ կը կոչուի :

Տանիքը բռնուած է ատաղձներով , ընդհանրապէս անոնց մէջ պարապ միջոցներ կը թողուն՝ լուսամուտ անուանով տանիքին տակ՝ տանը վերջին յարկը ճեւացընող չեւերարանն լուսաւորելու համար : Երբեմն տանիքն անանկ կը չինեն որ՝ լուսամուտներու տեղ փորքրիկ պատուհաններ ձգուին և վերջին յարկը կը բաժնեն սենեակներու , որք մանսարդ կը կոչուին :

Տունը դոցուեցաւ , ըսել է դործին աւարտին ծանր մասը աւարտեցաւ : Բայց դեռ շատ բան պէտք է որ բնակելի ըլլայ : Ատաղձադործներն պատուհաններն կը բերեն կը յարմարցնեն • դռներն և պատե-

րու այս ինչ մասերն ծածկող ատաղձներն կը դնեն : Ապակեգործը ապակիները կ'անցնէ : Դարբինն երկաթեայ ճողեր կը դնէ պատուհաններուն և ամէն մէկ դրան մէկ կղպանք և մէկ նիգ կը չինէ : Թիթեղագործն անձրևի խողովակներն կը կը չինէ :

Բոլոր այս աշխատութեանց համար չատ ժամանակ հարկ է : Տանուտէրն անհամբերութեամբ կ'ուզէ ժամ առաջ իւր դեղեցիկ նոր տունը բնակիլ : Բայց պէտք է համբերել, եթէ չ'ուզէր յօդացաւութեան կամ ուրիշ աւելի ծանր հիւանդութեանց ենթարկուիլ : Պատերը կատարելապէս չի չորցած՝ պէտք չ'է տան մը մէջ բնակիլ :

Երբ տուն մը չինելու համար հող մը ընտրուի, պէտք է բարձր տեղ մը ոչ րոշել և տանը երեսը դէպ ի հարաւ չինել, որպէս զի արեւն բոլորովին մէջն ըլլայ : Եթէ դժբաղդաբար հարկ ըլլայ ցած ու խոնաւ հող մը վրայ չինել, առողջութեան չի վնասելու համար՝ պէտք է խոր փոսեր բանալ, հիմերէն աւելի խոր, և անոնց մէջ թրծուն հողէ և ծայրերը բաց խողովակներ դնել : Խողովակները դրուելէ ետեւ՝ փոսերը կը լեցնեն և հողը կը հաւասարեցնեն : Ջուրը փոսերուն վարի մասը կը թափանցէ, խողովակներուն ծայրերէն ներս կը մտնէ և անանկ տեղ մը կը վազէ, ուր վնասակար չ'է : Դիտմամբ չ'ենք խօսիր ձեղ այսօր կրի, չաղախ, ևն, վրայ, ղորս կը գործածեն տուներու չինութեան մէջ, ասոնց վրայ վերջէն պիտի խօսինք :

## ՋԻՒՆԸ

Տղայ մը կ'ըսէր ձեան .

Ինչո՞ւ քու ամպային լեռներուդ մէջ չ'ես մնար : Քու ներկայութիւնդ զաշխարհ կը տխրեցնէ, և աչնան թողած դաշարներն կը ծածկէ մեր աչքէն :

Տեսայ որ դուն կապոյտ երկինքը մթընցուցիր և երկիրս նմանեցար ծերունիի մը, որու մազերն ճերմկցած են ցաւերէ :

Հորիզոնին ծայրն երեւցած դաշտերն մեղամաղձոտ են և մեր ծառոց ճիւղերն կը կոտրին քու ծանրութեանդ տակ :

Ագռաւք կը սիրեն ղքեզ, վասն զի նոցա սեւ փետուրներն աղէկ մը կ'երևնան երբ կը թռչին մեներաւոր երկնից տակ :

Բայց փոքր թռչնիկն կ'անիծէ ղքեզ, վասն զի ճիւղին վրայ կը մնայ և չ'դիտեր թէ ո՛ւր դնէ իր տոտիկներն :

Ճամբորդն կ'անիծէ ղքեզ, վասն զի իւր ճամբան կը ծածկես, և դաշտին մէջ սպիտակ ուրուականաց վազելն կը տեսնէ :

Ինչո՞ւ համար նոյն իսկի ծոց քաղաքաց կը հալածես զմեզ և քու վերարկուդ կը ձգես բնակարանաց տանիքներուն վրայ :

Փողոցին մէջ տղաք իրենց թմրած մատներո՞ւն քեզ դնտակներ սպիտի չինեն և իրարու պիտի նետեն : Չար տղայք իրենց ոտից ներքեւ ղքեզ պիտի կարծրացնեն և ասանկով սահուն որոդայթ մը պիտի չինեն դողդոջացող ծերունւոյն և տատանող կնոջ ճամբուն վրայ :

Բայց Աստուած ալ, քեզ պատժելու համար, իւր անձրեւը պիտի թաւիլ կամ արեւը փայլեցնէ, և դուն պիտի հալիս ու թափիս գետերու ջուրին մէջ :

Դուն ծաղկէ մ'աւելի չուտ պիտի անցնիս, վասն զի քու հրապոյրներուդ տակ մահուան ցրտութենէն զատ բան չ'կայ :

Ես կ'ատեմ ղքեզ, վասն զի մայրս չի թողուր որ դուրս ելնեմ, և դուն՝ սառնամանեաց չունչին տակ քնացող բնութենն պատանքն ես . . . . . :

Ջիւնը պատասխանեց .

Իմ թեթեւ փրփուրներս օդոյն մէջ կը թռչտին սպիտակ ծաղկանց անձրեւի մը պէս, զոր ձմեռն կը հեղու յերկիր :

Բանաստեղծներն երգեցին իմ կուսականս սպիտակութիւնն, և ըստ անոնց ես

երկրի հարսնցուին քօղն եմ, որ գարնան հարսանեաց կը պատրաստուի :

Երկրագործք ուրախութեամբ կը բաբեւէն իմ գալուստս. կ'օրհնեն հողոյն արդասաբեր ջերմութիւնն և հնձող ընձիւղներն, զորս իմ առատութիւնս կը պահպանէ :

խոստումներուն պահապանն :

Եթէ ես չ'ըլլայի, յունիսի մէջ բուսնելիք պատուղներն կը մեռնէին և տերեւ արձկող ճիւղերու հիւթն կը սառէր :

Մի՛ անիծեր ցիս, եթէ անմիտ և չար տղայք ինձմով գակարթ մը կը լարեն տըկարին, վասն զի ամէն չարութիւն իւր

Տղա՛յ, քու մատղաշ միտքդ հաճոյք մըայն կը բնառէ և քու հազիւ բացուած աչքերդ իրաց օգտակարութիւնն չ'են նըշմարեր : Իմ գալուս պատճառն այն է որ, Աստուած կը ղրկէ ցիս, և մայրդ ըսած է քեզ թէ նա ինչ որ ընէ՝ աղէկ կ'ընէ :

Ես ձմրան չքեղ զարդն եմ և գարնան

պատիժն կը գտնէ, և ես ալ զանոնք պիտի պատժեմ՝ իրենց մատերն սառեցնելով :

Տղա՛յ, եթէ ձմեռն տխուր չ'ըլլար, ամառը դեղեցիկ չ'էր ըլլար, և երբ ծաղկունք բացուին և ժպտին, ով կը յիշէ իմ վաղանցուկ իշխանութիւնս :

# ԱՍՏԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆԵՐ

## Ա· ԱՐԵԳԱԿՆ

(Շար՝ , տես բիւ 24 )

### ԼՈՅՍ ԵՒ ՋԵՐՄՈՒԹԻՒՆ ԱՐԵԳԱԿԱՆ

*Հին կռապաշտութեան պարուց մէջ պիտեմք որ մարդիկ Արեգակին իբրեւ աստուած կը պաշտէին . առանց գիտնալու շլացուցիչ աստեղ իրական մեծութիւնն և անքաղդատելի կարեւորութիւնն , գիտէին սակայն թէ նա է բնութեան հայրն, նա է որ կը պահէ կեանքն , նա կ'ամեցընէ ծառերն անտառաց մէջ , կը հասցընէ պետական հովտին մէջ , կը ծաղկեցընէ մարգագետիններն , երգել կուտայ թռչնոյն պուրակաց մէջ , կը հասունցնէ արմտիքն և պտղներն , և ի նմա կ'ողջունէին մարդիկ իրենց հայրն , իրենց բարեկամն և պաշտպանն :*

*Այժմեան գիտութիւնն միայն կ'ըստուգացնէ , կը տառնասպատակէ , կը հաւիւրապատկէ հին ժամանակաց դիտութիւններն Արեգական վերայ ; որոց*




Համեմատական մեծութիւն Լուսնթագի , Երկրի եւ Արեւակի (*)

*ուած կը պարտինն . առանց գիտնալու չլացուցիչ աստեղ իրական մեծութիւնն*

(*) Մեր նախորդ յօդուածին համեմատական պատկերին մէջ «Արեւսեակ» կըրուած է սխալմամբ փոխանակ գրուելու «Երատ» , որոյ համեմատական մեծութիւնն էր մեր պատկերին մէջին մոլորակն :

լոյն , ջերմութիւնն և զօրութիւնն այնքան վեր են հին դաղափարներէ , որ քան վեր է բնութեան բանաստեղծութիւնն մարդկային բացատրութենէն : Բնագիտական որ և է լոյս չէ կարող բաղդատուիլ Արեգական լուսոյն հետ . եթէ ելեքտրական ամենափայլուն լոյսն նորա սկաւառակին առջեւ բռնուի , սեւ կ'երեւի բոլորովին : Մեր հնոցներուն ամենաբարձր ջերմութիւնն , որով կը հալի ոսկին , արծաթն և լոնոսկին , Արեգական ջերմութեան քով սառ է միայն : Մարդիկ արուեստով կարող եղած են 2500ն մինչեւ 3000 աստիճան ջերմութիւն արտադրել — դիտեմք որ ջուրն հարիւր աստիճան ջերմութեամբ կ'եռայ — բայց այդ 3000 աստիճան ջերմութիւնն ի՞նչ է հրաւառ աստեղ անըմբռնելի ջերմութեան առջեւ , ըսել կ'ուզեմք Արեգական , որ 148,000,000 հազարամեդր հեռաւորութենէ կարող կը լինի ջեռուցանել մեր մոլորակն (երկիրն) , և այն՝ իւր ճառագայթած ջերմութեան 2,000,000,000երորդ մասովը որ կը հասնի մեր երկրագնդին վերայ և որ բաւական է արգասաւոր պահելայն և պահպանել բնութեան կեանքը :

Արեգակն է վերջապէս այն ամենազօր աղբիւրն , յորմէ կը բղխին ամէն զօրութիւնք որ կը շարժեն երկիրն և նորա կեանքը , իւր ջերմութիւնն է որ հողմ կը յարուցանէ , ամպեր կը բարձրացնէ , գետեր կը հոսեցնէ և կ'ապրեցնէ զմարդ : Այն անոյշ գինին որ կը հճրուեցնէ մեր սեղանն , Շամբանիոյ գինին որ կը ղողայ բիւրեղեայ բաժակին մէջ , Արեգական ճառագայթն է մթերուած մեր ճաշակին համար : Փայտն որ զմեզ կը ջեռուցանէ ձըմեռ առեն՝ Արեգակն է դարձեալ կտոր կտոր : Աղօրիքն որ կը դառնայ հողմոյ կամ ջրոյ մղմամբ՝ Արեգակն է որ զայն կը դարձնէ : Երկաթուղւոյ կառախումբն , այն ղղրդող և կոյր կազմածքն , որ անձրեւի տակ , ձեան տակ , դիշերուան մէջ , ցուրտ ժամանակ կը սլանայ դաշտերու թռչուն օձի նման , կը սուրայ հովտաց մէջ , կը մտնէ լերանց տակ , կ'ելնէ չքելով , կը դահավիժի գետափանց խորչերուն մէջ , այս նորանշան կենդանին , թէպէտ մարդկային ճարտարութեան գործ , բայց դարձեալ Արեգական զաւակն է : Հանքային ածուխն որ միլիոնաւոր տարիներէ ի վեր երկրագնդիս խաւերուն տակ մթերեալ կը մնայի՝ Արեգական աշխատութիւնն է դարձեալ : Արեգակն է որ կը շնչէ օդոյ մէջ , որ կը հեծէ փոթորկաց մէջ , որ կ'երդէ սոխակին անխոնջելի շնչափողին մէջ : Որոտմունք և փայլատակունք նորա զօրութեան յայտարար նշաններն են : Ամէն հուր որ կը վառի , ամէն բոց որ կը փայլի , իրենց կեանքն Արեգակէն ընդունած են : Եւ երբ երկու բանակներ միմեանց կը բաղխին մեծադղրդ չառաչմամբ , գիտցէք որ Արեգական զօրութիւնն է այն զոր մարդկեղէն արարածք չարաչար կը զօրծածեն պիրար սպաննելու համար :

ԱՇԱԿԵՐՏՔ ԲԱՐԶՐ ԿԱՐԳԻՆ

Շարունակելի Հայկական կբ Նաբանէ

## ՄԱՆԿՈՒԹԻՒՆ ԵՐԵՒԵԼԻ ԱՐԱՆՑ

ՓՈՔՐԻԿ ՀՆԱԳԵՏՔ

## ՈՒԻՆՔԸԼՄԷՆ

*Հնաբարկատի մը խանութին պէս տըխուր բան չ'կայ . բոլոր թաղերու մէջ տարածուած չքեղութիւնն ու մաքրութիւնը քիչ առնէին այս տեսակ կրպակները պիտի անհետացնեն ամէն քաղաքներէն . բայց հիմայ դեռ բնտռելով կըր-*

նան գանուիլ, և ասկէ զատ, չատ մը աղքատ գործաւորաց տուներուն մէջ, գանապաններու օթեակները ճչմարիտ խանութներ են։ Կօշկակարներն, որոնք միչտ նստած՝ իրենց թեզը կը քաչեն, կրնան գանապանութիւն ընել և տանուտեարք զատնք նախամեծար կը համարեն. բայց բուն հնակարկատի խանութին վրայ խօսինք։ Ընդհանրապէս պարտկի մը, եկեղեցւոյ մը կամ վանքի մը պատին կոթնած փայտէ խղիկներ են։ Խանութին մէկ երեսը կէսը եղուտած թուղթ և կէսը ապակի անցած չրջանակ մ'է, որու մէջ է նաև ցած ու նեղ դուռը. եղերքի տախտակն չորնալու համար քանի մը կտոր կաշի կախուած է. այդ տախտակին վրայ քանի մը հին կօշիկներ և մէկ կամ երկու ծղկի թաղարներ կան, որոց մի քանի կողմերը կտորտած կըլլան միչտ, այս թաղարներուն մէջ տատակահատ տուներ անկուած են, կաշին անախորժ հոտը փառատելու համար։

Ներսը, ապակիին քով կը գտնուի սեղանը, որու վրայ դրուած են սկսուած գործեր, կօշիկներ չինելու կամ նորոգելու նիւթեր, և կօշկակարի գործիքներ, սեղանին բոլորտիքը 2—3 խարխուլ աթոռակներ դրուած են. խորը կայ փոքրիկ վառարան մը և անկողին մը. ընդհանրապէս պատէն մէկ քանի պատկերներ և ձեռքի փոքր հայելի մը կախուած է։

Ահա՛ այս օրինակ խանութի մը մէջ կը ընակէր, 1729ին, Պետրանիոյ Մեծ չնաղ փոքրիկ քաղքին մէկ խեղճ հնակարկատը, Ա յս խանութը դպրոցին պարտիզին մատռտ ու սեւ պատին կոթնած էր, և չատ անգամ, գիւսանքի ատեն դպրոցի աղչայք պատուհներ կամ ընկոյզներ կը նետէին այդ ընակարանին վրայ՝ պօռալով. « Բարե՛ւ հնակարկատ. » երբեմն ալ, կառավարչէն չանդիմանուիլը աչք առնելով, իրենց հին կօշիկներն այսպէս կը նետէին որ նորոգէ։ Այս դրացնութիւնն տեսակ մը ճանչցորութիւն հաստատած էր դպրոցին և պարկեչտ հնակարկատին միջեւ, որ չարունակ հաւատարմարար ետ կը դարձընէր ատանկ անսովոր կերպիւ իրեն եկած կօշիկներն։ Ատանկով բոլոր այս փոքրիկ սադայեներն իւր չամախորդը եղած էին, որ քիչ բան ըսել չէ. վասն զի աղոց կրակոտ չարժումներն կօշիկներու մահն է։

Խեղճ գործաւորն, իւր սեղանին վրայ ծռած, առաւօնէ մինչեւ իրիկուն կ'աշխատէր, թէ և տատակ յօդացաւութեան մը ենթակայ էր, նիհար էր ու արդէն ծեր կ'երեւնար, թէ և հազիւ չիսուն տարեկան կար. թշուառութիւնն ու ցաւերը տարիները կը կրկնէին։ Սպիտակ մազեր իւր նիհար քունքերուն վրայ ծածէին, և հակապատկեր մը կը կազմէին իւր սուր աչքերուն և սեւ յօնքերուն հետ։ Շատ տարիներէ ի վեր այրի ու աղքատ ըլլալով, խեղճ մարդը չ'էր ժպտեր, բայ ի երեկոյներէն, երբ որդին դպրոցէն կուգար, և բազուկները վիզը նետելով՝ գայն կը համբուրէր. այն ատեն խանութին մէջ հանդէս կար, հնակարկատն իր գործիքներն ու կաշիէ գոգնոցը կը թողուր. ձեռքերը կը լուար, կրակը կը բորբոքէր. և տանտիկնոջ մը պէս կը սկսէր իրիկուան կերակուրը պատրաստել։ Փայտէ վերգիները կը դնէր ներսէն և հայրն ու տղան ինքզինքնին իրենց տանը մէջ կը զգային, և ճաչի ատեն մէկմէկու կը պատմէին թէ օրերնին ինչպէս անցուցին. տղան, որ վեռէ բայց սիրուն էր, կ'ըսէր հօրը թէ ի'նչպէս ամէն օր նոր բան մը կը սորվէր, և թէ իւր վարպետներն, իր յառաջադիմութեան հաւնելով, գինքը ուսումնարանը պիտի մտցնէին։ Հայրը ուրախութեամբ կը համբուրէր որդին. հը պարտութեամբ կը դիտէր գայն, ինչպէս

որ մարդ կը դիտէ իրմէ վեր բան մը, և կը դողչէր.

« Ո՛հ, իմ ժօաքիմս, ինչո՞ւ հարուստ չ'եմ, որ գքեզ պիտուն ու երջանիկ ը-նեմ:

— Նախ կ'ուզեմ պիտուն ըլլալ, կը պա-տասխանէր ժօաքիմ, վերջէն երջանիկ կ'ըլլանք: »

Եւ այսպէս խօսելով՝ հօրը կ'օգնէր սե-ղանը վերցնելու և կը հարցնէր անոր թէ ցերեկը ի՛նչ տեսեր և ի՛նչ ըրեր էր: Երբ կինը մեռած տանէն հանբուրեր էր զգեստ: Փոքրիկ ժօաքիմ չատ անգամ կը կարդար զգեստ, և ծերունի հնակարկատն ուշա-դրութեամբ մտիկ կ'ընէր: Բայց ժօաքիմ չատ անգամ ալ կը կարդար Հոմերոսի գերմաներէն թարգմանութիւնը՝ զոր մըր-ճանակ առած էր: Առանց զգալու խեղճ հնակարկատն սկսաւ համ առնել այս դիւ-ցազնական վէպերէն՝ որոնք իր զաւկին ալ սիրելի էին: Իւրաքանչիւր երգին՝ տղան կը կենար իր զարմանքը կամ հի-

Ռինքըլմանի մանկութիւնը իր հօրը խանութին մէջ

կերակուրը լմնար, հայրը իր գործը ձեռք կառնէր և տղան՝ գոլորշէն պարգեւ ըս-տացած գրքերը կը կարդար իրեն: Հայ-րը երբեմն կը տիսկէր որ իր հին Աստ-ուածաշունչը կարդար: Այս Աստուածա-շունչն իր տատանումներէն մնացած էր և ացումն յայտնելու համար: Ի՛նչ աչխարհ, ի՛նչ երկիր, ի՛նչ երկինք, ի՛նչ դաշտեր, ի՛նչ գեղեցկութիւն ունէին արդեօք այն դիւցազունք: Օր մը ըսաւ.

« Բայց այս գրքին մէջ կարևոր բան մը կը պակսի: Շարունակելի

# Պ. ԿԱՄՊԷԹԹԱ

Պ. կամպէթթա ծնած է ի թահօր 1838 հոկտ. 30ին։ Նաբօլէօնի կայսրութեան առեն աննշան փաստաբան մ՚էր, բայց Բիվիյլ լրագրոյ խմբագրապետին մէկ դատն պաշտպանելով՝ մեծ համբաւ ըստացաւ։ 1869ին երեսփոխան ընտրուեցաւ։ 1870ին առժամանակեայ կառավարութեան առեն ներքին գործոց պաշտօնեայ եղաւ։ Բարիզ պաշարուած էր Գերմանացիներէ։ Ազգային պաշտպան կառավարութիւնն ուղելով վինքը Թուրի պատգամաւորութեան մէջ մտցնել, ընդարձակ իշխանութիւններ չնորհեց Պարոն կամպէթթայի, և հոկտեմբեր 7ին բալիզէն դուրս ելաւ Արմաճ Պարպիսի օդապարիկով։

Ջինադաղար ըլլալուն պէս՝ իշխանութենէ քաշուեցաւ։ 1871 վերջ. 3ին 6 նահանգք վինքը երեսփոխան ընտրեցին։



Բայց խաղաղութիւն կնքուելէ վերջը հրաժարական տուաւ։ Յուլիս 2ին կրկին երեսփոխան ընտրուեցաւ։

Այն առեն հիմնեց լրագիր մը՝ որ հասարակապետութեան մէկ հզօր գործիքն եղաւ։ 1871ի ժողովոյն մէջ Պ. կամպէթ-

թա ձախակողմեան էր : Պ. կամպէթթա մեծ դեր խաղաց սահմանադրութեան քուէարկութեան մէջ : 1876 փետր · 20ի ընտրութենց առեն Սէնի երեսփոխան ընտրուեցաւ 11,589 քուէով : Մայիս 16ի պաշտօնէութիւնն Պ. կամպէթթան պատժեց և բանտարկութեան դատապարտեց Լիլ քաղքին մէջ խօսած ճառին համար : Պ. կամպէթթա Սէնի նահանգն վերադարձաւ և 13,812 քուէով վերստին երեսխան ընտրուեցաւ : 1881ին պաշտօնէից խորհրդոյ նախագահ ընտրուեցաւ , բայց չատ քիչ տեւեց իւր պաշտօնէութիւնն : Այս նշանաւոր անձը մեռաւ 1882 դեկտ· 20ին , 44 տարեկան :

## ԱՌՕՏՆԻՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅՕՐԻՆԵՑ

### Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

### ՆԱԽԱՐԱՆ

Երբ 1866ին՝ Ազգ · վարչութեան որոշմամբ տեղւոյս երկսեռ վարժարանաց տեսչութեան պաշտօնը ստանձնեցի , ուսմանց ծրագիրը վերաքննելով՝ պէտք եղաւ մի քանի փոփոխութեանց հետ՝ առաջին անգամ Առտնին Տնտեսութեան ուսմունքն ևս անցնել սոյն ծրագրին մէջ : Նոյն թուականէն՝ մի քանի առարկայից դասախօսութենէ զատ՝ Առտնին Տնտեսութեան դասը չարունակած եմ և դեռ ևս կ'չարունակեմ Հոփսիմեան ուսումնարանի Գ· և Դ· կարգերուն առանդել : Դժբաղդօրէն՝ ինչպէս ուրիշ չատ ուսմանց՝ նոյնպէս Տնտեսութեան դասագրքեր կը պակսէին մեր մէջ · հետեւապէս պարտաւորած էի պատրաստել նախ դասախօսութիւններ և ապա բերանացի աւանդել որ դրի առնուն աշակերտուհիներն , և կամ ինքս դրել և ապա օրինակել տալ : Ահա դասերուն ուրուագրերն ամփոփելով արժան կ'դատեմ ի լոյս ընծայել :

Այս առթիւ աւելորդ չ'եմ համարիր բացատրել թէ ինչ ուղղութեամբ պատրաստուած է սոյն դասագիրքը :

Իմ աչքես առաջին ժամէն երկու մեծ դժուարութիւն կ'ելնէր ·

Ա· — Ի՞նչ տեսակ տնտեսութիւն պէտք է դասախօսել Հայ աղջիկներու ·

Բ· — Մինչ մեր ընկերային վիճակն ու ընտանեկան կեանքը կ'ներկայէն միօրինակ անտեսութեան դասագիք մ'ունենալ :

Ա· — Առտնին տնտեսութիւնը չ'նմանիր այն բարոյական և ֆիլիզական դիտութեանց որ հաւասարապէս ամեն ազգերու կրնան աւանդուիլ առանց որ և է փոփոխութեան · վասն զի անոնց սահմանն և օրէնքն արդէն գծուած են , և ուսուցիչն ուրիշ բան չ'ունի ընել , այլ միայն իր դասարանին մտային կարողութեան չափովը յարդարել իր դասախօսութեան նիւթն ու եղանակը : Սակայն այն իսկ բազկիրթ ժողովուրդներն տարբեր տարբեր տնտեսական պիտոյքներ ունին , հետեւապէս և տարբեր առտնին տնտեսութիւն, թո՛ղ Հայք՝ որոց տնային և ազգային կեանքն այլազան են և բացառիկ պարագայից ենթակայ: Բառին իրական առմամբ չ'կայ բուն հայկական ընտանի կեանք , և ինքնին չ'կրնար լինիլ , ոչ միայն մեր վտարանդի կեցութեան , այլ և բազմադիմի յարաբերութեանց և զարգացման օրինաց պատճառաւ : Ըստ տեղւոյն և քաղաքական կացութեան՝ Հայը կ'փոխէ իր ուտեստն , իր զգեստն , իր բնակարանի կարգադրութիւնն , իր տան վարչութեան ձեւն , և մինչեւ անգամ իր առողջապահիկ պայմանները · խնդիրներ՝ որ տնտեսութեան կարեւոր նիւթը կ'կազմեն : Ու-

բեմին մեր ժողովրդեան առանին տնտեսական վիճակն ու օտար աղգի տնտեսութեան կը յարմարէր — ամենուն և ոչ մէկուն առանձին : Ունէի իմ ձեռքիս տակ այլ և այլ օտար դասական դրեան , փըրանսացի , ամերիկացի , անգլիացի , հելուետիացի աղջկանց համար յօրինուած , սակայն և ոչ մին կ'յարմարէր բոլորովին մեր տնային պայմաններուն , որպէս զի կարելի լիներ լոկ միոյն հետեւիլ և Հայ օրիորդներու համար գոհացուցիչ դասագիրք մը յօրինել : Ֆրանսացին , ինչպէս Տիկ · ե· Իբօ իր Առտնին Տնտեսութեան դործին մէջ՝ Սոկրատ , Բսենոփոն , Ֆրանքլին կ'խառնէ և շատ ընտիր բարոյական խրատներ տալէն ետեւ՝ ժամանակի , դրամի իմաստուն կիրառութեան և խնայասիրութեան վրայ կ'ջանայ պատրաստել ոչ այնքան տնային օրիորդներ ու կիներ ընտանի չրջանին մէջ , որքան աղնուական տնտեսուհիներ՝ ընկերութեան կամ սալօններու մէջ չէնքով շնորհքով վարուղ :

Միւս կողմէ՝ Պ· ժ· Պլէզ Ֆրանսացին տնտեսութեան արհեստական մասին վրայ կ'ծանրանայ , այլ և այլ կերակուրներ , անուշեղէններ և օշարակներ պատրաստելու եղանակը կ'սորվեցնէ : Ամերիկացին՝ ինչպէս Օր· Պիչըր՝ բոլորովին տարբեր չափ մը կ'բռնէ , բնաթօսական և կենսապահիկ դասերու հետ կ'խառնէ՝ դործնական ոդուով , տնային բարեկարգութեան և մինչեւ իսկ արուեստներու վերաբերեալ չատ օգտաւէտ դասեր :

Անգլիացին՝ ինչպէս Պ· Յ· Հէսսել՝ իր Տնտեսութեան դասագրքին մէջ՝ աւելի բանաւոր ընթացք մը կ'բռնէ · նախ՝ մարդկային մեքենային ներքին կազմութիւնն ու դործարաններուն պաչտօնը կ'նկարագրէ : Ապա այդ մեքենան կազմող նիւթերը վերլուծելով՝ ցոյց կ'տայ թէ մարդու ուտեստն ինչ աննդարար տարրներ կ'պարունակէ և թէ որո՞նք են աւելի օգտակար և ածան ուտելիքն , չ'մոռնալով նաև առանին բարեկարգութեան կանոններ և կենսապահիկ ու բուժական պարզ հրահանգներ աւանդել :

Հելվէտիացին՝ ինչպէս Տիկ Կ· Շուման՝ կէս դիւղացի և կէս քաղաքացի տիկնոջ պաչտօնն ու պարտիքը տան մէջ կ'բացատրէ՝ պարզ ոճով , մինչդեռ նորերս Ֆրանսացի Պ· Ա· Պիտարի հրատարակած ստուար դործն՝ Տան տիրուհոյն դիրքն անուն , կ'պարունակէ ամեն ինչ , տնապահիկ և խոհարարական հրահանգներ , բուժային դեղագրեր , մարմնամարզի եւ խաղի դասեր , այնպէս որ կերպ մ'առիթով և դործնական բառարան մ'է ընտանի , դիւղական և ընկերային կենցաղավարութեան համար , սակայն դասական դիրք մը լինելու պայմաններէ զուրկ : Իսկ վերջին ժամանակներս՝ Օր · Էր · Ուեթի հրատարակած՝ Ապագայ Տնտեսուհին ա նուն դիրքը կ'պարունակէ թէև չատ ընտիր հրահանգներ տնտեսութեան զանազան ճիւղերուն վրայ , սակայն ունի նաև այնպիսի մասեր՝ մանաւանդ կերակուրներու և ըմպելեաց վրայ , որ մեզի բոլորովին անծանօթ են :

Անչուշտ այս և ուրիշ տնտեսական երկեր ունին քիչ չատ իրենց դործնական և դիտական արժէքն · բայց յարմար են մեր կենաց : Ահա այս խնդիրը պէտք էր լուծել հայերէն դասագիրք մը պատրաստելէն առաջ :

Բ· — Ըստ որում՝ մեր ընկերային վիճակը այլազան և մեր տնական կեանքն բազմաճղի են , պէտք պիտի լիներ Հայ ընկերութեան մէն մի որոշ հատուածին բարուց և կեցութեան նայելով՝ յատուկ յատուկ առանին տնտեսական կանոններ որոշել : Այսպիսի աշխատութիւն մ'ոչ միայն դժուարին այլ և անօդուտ էր առ

այժմ. Հայաստանի այլ և այլ ընտանիքներ չ'են ապրիր ինչպէս կ'ապրին Թուրքիոյ Հայ ընտանիքները: Օրինակի համար, անոնք ունին ազգային կամ տեղական կրակուրներ, հագուստի ձեւեր, ըմպելեաց տեսակներ՝ որոցմէ գլխովին տարբեր են մերիններըը և որոց վրայ մեր տեղեկութիւնք ցանցառ են:

Արդ՝ այս անխուսափելի դժուարութեանց առջեւ ինչ պիտի ընէր ուսուցիչ մը — կարծեմ ուրիշ ճար չ'կար այլ ընտրել միջին ճամբայ մը՝ այնպէս որ՝ եթէ ոչ բոլոր Հայ հասարակութեանց գոհ գոհ՝ ընդհանրապէս ամէնուն ընդունելի ընէ իր երկասիրութիւնը՝ իր ընդհանուր ուղղութեամբը:

Արդարեւ՝ ամեն արհեստ և գիտութիւն իր հիմնական սկզբունքն ու օրէնքն ունին: Աստղին Տնտեսութիւնն ևս ունի իր էական հիմունքն. տնական կարդապահութեան, մատակարարութեան, մաքրութեան, խնայութեան և այլ պիտոյից պայմանները գրեթէ նոյն են քիչ շատ զարգացած ամեն ազգի համար: Սակայն ամէն միայն ընտանի տնտեսութեան նիւթական մասերու վրայ առանց չօշափելու նաև այն բնախօսական և առողջապահական խնդիրներն որով կ'բացատրուին պիտոյից այս կամ այն կերպով գոհացումն, բաւական ընթացք մը չ'է: Բարոյական ու ֆիզիքական գիտութեանց մէջ գտնուած յարաբերութիւնն ալ իր զգալի է աստղին տնտեսութեան ուսման մէջ:

Այդ կէտը՝ եւրոպացի տնտեսագէտներ իսկ երբեմն անտես կ'առնուն և այն պատճառաւ միակողմանի կամ լուկ իրենց ընտանի և ընկերային կենաց յարմար չոր ու ցամաք դասեր, — խրատներ կ'տան: Գիտութեան զանազան ճիւղերն այնքան սերտ կապուած են իրարու հետ, և այնքան կ'ներգործեն մեր ընտանեկան կեանց վրայ որ միայն ուսումն անխմանալի կամ մեքենական կը դառնայ՝ եթէ միւսները չ'բացատրեն անոյշն լաւ կենցաղավարութեան հիմնական սկզբունքները:

Շարունակելի

—❀—

ՀԱՆԵԼՈՒԿ 1.

ՔԱՌԱԿՈՒՍԻ ԲԱՌԵՐ

Առաջին բառն է տեսակ մը մետաղ. — իսկ երկրորդը ալ մկ տեսակ մը խաղ.— երրորդն լուսաւոր մարմնոյ է անուն, — իսկ քեզի կ'ըսեմ չորրորդն այս պահուն:

—❀—

ԲՈՒԲԱՍՏԱՆ ՄԱՆԿԱՆՑ

կը հրատարակուի տեսր առ տեսր 16 երեսէ բաղկացեալ:

24 տետրին գինն է 2 արծ. Մէջիտ.

Ռուսաստանի համար 4 Րուպլի.

Գաւառաց համար 45 դահեկան արծ.

Մէն մի տետրին գինն է 100 փարայ

Աղքատ տղայք՝ 24 տետրին պիտի վճարեն Պօլսոյ մէջ մկ արծաթ Մէջիտ, իսկ գաւառներէն 28 դահ, եթէ իրենց գրացին Հոդ աբարձութենէն և կամ գըլխաւոր Դատաստանէն վկայական մը բերեն:

Բաժանորդագրութեան տեղերն են Սուլթան–Համամ թիւ 14. և Կամուրջի գլուխ՝ Սուճի Պողոս աղայի խանութը:

Բուբաստանի 1883 տարւոյ տետրերուն հետ թերթ առ թերթ ձրի պիտի տրուի նաև «Փոքրիկ տիղուհ մը յուշամեկն» անուն գրքոյկը:

معارف نظارت جلیلهسنك نومرو ۱۲۹ سنه ۹۹ صفر ۱۲ رخصتله طبع اولنمشدر

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ — Ե. Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ ԵՒ Ս. ՏԷՕՎԼԷԹԵԱՆ

ի Տպարանի Զարդարեան. — Պօլիս, Սուլթան – Համամ թիւ 14